

Travel Grant for Collaborative Research

Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամը (FAST) հայտարարում է իր՝ «Ճամփորդական դրամաշնորհ գործընկերային հետազոտությունների համար» 2018-2019թթ. ծրագրի դիմում հայտերի ընդունման մեկնարկը:

Հիմնադրամի առաքելությունն է ստեղծել էկոհամակարգ, որը կխթանի տեխնոլոգիական նորարարությունն ու գիտական առաջընթացը Հայաստանում և դրա սահմաններից դուրս: Դրամաշնորհային ծրագիրը նպատակ ունի նպաստել այս առաքելությանը՝ աջակցելով STEM ոլորտներում հայաստանյան և միջազգային հետազոտողների միջև համագործակցությանը: Ծրագիրը հնարավորություն է ընձեռում թե՛ Հայաստանի և թե՛ միջազգային (այդ թվում՝ սփյուռքահայ) հետազոտողներին հանդիպելու իրենց գործընկերներին համատեղ գիտական նախագծերի վրա աշխատելու համար:

Ծրագիրը ներառում է երեք տեսակի դրամաշնորհ.

1-ին տեսակ – նախատեսված է հայաստանյան հետազոտողների համար՝ նպատակ ունենալով իրականացնել միջազգային գործընկերների հետ համատեղ գիտական գործունեություն, որը կֆինանսավորվի իրենց երկրներում գործող գիտական կազմակերպությունների կողմից,

2-րդ տեսակ – նախատեսված է հայաստանյան հետազոտողների համար՝ նպատակ ունենալով իրականացնել առաջատար միջազգային հետազոտական հաստատությունների գործընկերների հետ համատեղ գիտական գործունեություն FAST-ի համար առաջնահերթ համարվող ոլորտներում (բիոտեխնոլոգիաներ, համակարգչային և տեղեկատվական ոլորտ, արդիական նյութեր, միկրոէլեկտրոնիկա),

3-րդ տեսակ – նախատեսված է արտասահմանյան հետազոտողների համար, որոնք գալիս են Հայաստան իրենց հայ գործընկերների հետ համատեղ գիտական գործունեություն ծավալելու:

Յուրաքանչյուր դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է **7500 ԱՄՆ դոլար**:

1-ին տեսակ դրամաշնորհի համար դիմում հայտերը ընդունվում են պարբերաբար՝ մինչև 2019 թ.-ի ամառը: 2-րդ և 3-րդ տեսակի դրամաշնորհի համար դիմում հայտերն ընդունվում են մինչև 2018 թվականի հոկտեմբերի 30-ը:

Արդյունքները կհայտարարվեն մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:

Ծրագրի նպատակների, համապատասխանության չափանիշների, դիմելու ընթացակարգի և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար այցելեք դրամաշնորհային ծրագրի [վեբ-էջ](#):

Հարցերի դեպքում խնդրում ենք դիմել grants@fast.foundation հասցեով: